„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ„
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան 02.04.2019թ.

1. ԸՆՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կոլեկտիվ պայմանագրի կողմեր են հանդիսանում «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Վ.Բ.Առաքելյանի (հետագայում «Գործատու») և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի աշխատողների կոլեկտիվը, ի դեմս արհեստակցական կազմակերպության ընտրովի մարմնի ղեկավար՝ արհկոմիտեի նախագահ Ա.Անդիկյանի (հետագայում «Արհեստակցական կազմակերպություն»):

1.2 Կոլեկտիվ պայմանագիրը գործատուի (գործատուի ներկայացուցչի) և աշխատողների ներկայացուցիչների միջև գրավոր ձևով կնքված կամավոր համաձայնություն է, որը կարգավորում է աշխատողների և գործատուների միջև աշխատանքային հարաբերությունները:

1.3 Սույն կոլեկտիվ պայմանագրի առարկան գործատուի կողմից աշխատողների աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության և դրանց հետ կապված սոցիալական ու իրավական հարցերի լուծման համար տրամադրվող երաշխիքների և արտոնությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության համեմատ, լրացուցիչ դրույթների սահմանումն է:

1.4 Սույն կոլեկտիվ պայմանագրի դրույթներին իրականացնելիս գործատուն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև ՀՖԿՍՊԻ կանոնադրությամբ ու ներքին իրավական ակտերով:

1.5 Կոլեկտիվ պայմանագիրը կոչված է բարելավելու աշխատողների աշխատանքային պայմանները: Աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման նպատակով կատարվող կամ պլանավորված բոլոր ծրագրերը, որոնք իրականացվում են կողմերի նախնական համաձայնությամբ, համարվում են կոլեկտիվ պայմանագրի անբաժան մաս:

1.6 Կոլեկտիվ պայմանագրի կողմերը պարտավորվում են համագործակցել սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքներով և իրականացնել աշխատողների և գործատուի շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատողի և գործատուի կամ նրա կողմից լիազորված անձի հետ գրավոր աշխատանքային պայմանագիր կնքելու միջոցով: Աշխատանքային պայմանագիրը ներառում է գործատուի և աշխատողի բոլոր իրավունքները և պարտականությունները, ինչը բխում է կատարվող աշխատանքի առանձնահատկություններից:

Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

2.2 Աշխատանքային պայմանագրի պայմանները չեն կարող վատթարացնել աշխատողի աշխատանքի պայմանները գործող օրենսդրության, ինչպես նաև սույն կոլեկտիվ պայմանագրի համեմատ:

2.3 Գործատուն և աշխատողները պարտավորվում են կատարել աշխատանքային պայմանագրով նախատեսված պայմանները: Գործատուն իրավասու չէ պահանջել աշխատողից կատարել աշխատանք, որը նախատեսված չէ աշխատանքային պայմանագրով, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2.4 Ինստիտուտի աշխատողների թվաքանակի կրճատման հետ կապված հարցերը գործատուն լուծում է արհեստակցական կազմակերպության հետ խորհրդակցելով:

2.5 Գործատուն կրճատումներից առնվազն երկու ամիս առաջ ծանուցում է աշխատողներին այդ մասին և տրամադրում շաբաթական 4 ժամ տևողությամբ ազատ ժամանակ՝ նրանց նոր աշխատանք փնտրելու համար՝ պահպանելով հիմնական աշխատավարձը:

2.6 Աշխատանքում թողնելու նախապատվությունը, բացի օրենքով նախատեսված աշխատողների, տալ նաև հետևյալ աշխատողներին.

1) կենսաթոշակային տարիքից մինչև 5 տարի պակաս տարիք ունեցող, 20 տարի և ավել ինստիտուտում աշխատած աշխատակիցներին,
2) միայնակ ծնողներին, որոնք խնամքի տակ ունեն անչափահաս կամ հաշմանդամ երեխա:

2.7 Գործատուի նախաձեռնությամբ արհեստակցական կազմակերպության անդամ հանդիսացող աշխատողի աշխատանքային պայմանագրի լուծումը իրականացնել ՀՀ ԱՕ 119 հոդվածով նախատեսված կարգով:

2.8 Կողմերը պայմանավորվեցին՝ հետևողական աշխատանք տանել ինստիտուտում լրացուցիչ ֆոնդեր ստեղծելու և կենսաթոշակի տարիքի հետ կապված աշխատանքից ազատված ինստիտուտի վաստակաշատ աշխատակիցներին ամենամյա որոշակի նպաստ հատկացնելու ուղղությամբ:

3. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿ, ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ

3.1 Ինստիտուտում աշխատողների համար սահմանված է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով՝ շաբաթ և կիրակի:

3.2 Ինստիտուտում աշխատաժամանակի տևողությունը չի կարող գերազանցել շաբաթական 40 ժամը: Պրոֆեսորադասախոսական կազմի համար աշխատաժամանակի տևողությունը սահմանվում է շաբաթական 36 ժամ:

3.3 Հանգստի և սնվելու համար ընդմիջման սկիզբը սահմանված է ժամը 13.00, իսկ ավարտը՝ 13.30: Հանգստանալու և սնվելու ընդմիջման ժամանակահատվածը չի մտնում աշխատաժամանակի մեջ և աշխատողը կարող է այն օգտագործել իր հայեցողությամբ:

3.4 Աշխատողներն իրավունք ունեն օգտվելու վճարովի և այնվճար արձակուրդի իրավունքից: Ամենամյա վճարովի արձակուրդների ժամանակացույցը հաստատվում է մինչև տվյալ օրացուցային տարվա հունվարի 15-ը:

3.5 Մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրել՝

1) առողջարանային բուժման կարիք առաջանալու դեպքում
2) երեխայի բուժման կարիք առաջանալու դեպքում:

3.6 Կողմերի համաձայնությամբ աշխատողին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուն օր:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

4.1 Հետևողականորեն իրականացնել միջոցառումներ ինստիտուտի բյուջեի (պետական բյուջեի և արտաբյուջեի միջոցներով) ընձեռած հնարավորությունների սահմաններում բոլոր աշխատողների իրական աշխատավարձի բարձրացման ուղղությամբ:

4.2 Աշխատանքի ծավալի ավելացման դեպքում սահմանել աշխատանքի վարձատրության հավելում՝ հիմնական աշխատավարձի մինչև 50 տոկոսի չափով, ինստիտուտի սեփական միջոցների հաշվին:

4.3 Հերթափոխային, արտաժամյա, հանգստյան և տոնական օրերին կատարած աշխատանքը վարձատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4 Աշխատավարձը վճարել յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 15-ը:

4.6 Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացնել ոչ ուշ, քան արձակուրդը սկսելուց երեք օր առաջ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Գործատուն պարտավորվում է՝

5.1.1 Գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր աշխատողի համար ապահովել կահավորված, անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս աշխատատեղ և շրջապատող միջավայր:

5.1.2 Սահմանել հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքների ցանկը, որակավորման պահանջները և որակավորման քննությունների անցկացման կարգը:

5.1.3 Մշակել յուրաքանչյուր աշխատանք կատարելու համար անվտանգության ապահովման հրահանգ

5.1.4 Անցկացնել աշխատանքի անվտանգ կատարման կանոնների ուսուցում և հրահանգավորում (նախնական, աշխատատեղում և ընթացիկ)

5.1.5 Չթույլատրել աշխատողին անցնելու աշխատանքային պարտականությունների կատարմանը առանց աշխատանքի անվտանգության կանոնների ուսուցում կամ հրահանգավորում անցնելու:

5.1.6 Աշխատողին տրամադրել աշխատանքի բնույթին համապատասխան հատուկ հագուստ, հատուկ կոշիկ, անհատական պաշտպանության այլ միջոցներ ինչպես նաև անհատական հիգիենայի առարկաներ:

5.1.7 Կախված իրականացվող աշխատանքի վտանգավորության աստիճանից հաստատել պարտադիր և պարբերական բժշկական զննություն անցնող աշխատատեղերի ցանկը և ժամանակացույցը:

5.1.8 Աշխատողների պարտադիր և պարբերական բժշկական զննությունը իրականացնել աշխատանքային ժամերին, գործատուի հաշվին:

5.1.9 Համապատասխան ծառայություններին ժամանակին ապահովել անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերով:

5.1.10 Ստեղծել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցերով հանձնաժողով:

5.1.11 Ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնցով սահմանվում է աշխատանքի ժամանակավորապես դադարեցումը՝ եթե աշխատատեղում առաջացել են աշխատանքի անվտանգության ապահովման պայմանների հետ անհամատեղելի պայմաններ:

5.2 Արհեստակցական կազմակերպությունը պարտավորվում է՝

5.2.1 Աջակցել գործատուի կողմից աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումների իրականացմանը:

5.2.3 Հարկ եղած դեպքերում առաջարկություն ներկայացնել գործատուին կատարվելիք այն աշխատանքների վերաբերյալ, ինչը անհրաժեշտ է իրականացնել առանձին աշխատատեղերում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման վիճակի բարելավման համար:

5.2.4 Ներկայացնել առաջարկություն աշխատանքի ժամանակավորապես դադարեցման համար, եթե աշխատատեղում առկա են օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության պահպանման կանոնների կոպիտ խախտման դեպքեր:

5.2.5 Մշտական հսկողություն իրականացնել մայրության պաշտպանության վերաբերյալ օրենքով սահմանված երաշխիքների և արտոնությունների կիրառման խնդիրների նկատմամբ:

5.3 Կողմերը պայմանավորվում են աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների պատճառները պարզելու նպատակով անցկացնել համատեղ ծառայողական քննություն՝ օրենքով սահմանված կարգի շրջանակներում:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

6.1 Գործատուն պարտավորվում է՝

6.1.1 Յուրաքանչյուր տարվա փաստացի խնայողության 70 տոկոսը հատկացնել կոլեկտիվի սոցիալ կենցաղային տարբեր խնդիրների լուծման համար, մասնավորապես՝

1) աշխատակցի բուժման ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով /կոլեկտիվի հատկապես խիստ կարիքավոր անդամներին՝ համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում/,
2) աշխատողների հանգստի և առողջության պահպանման նպատակով,
3) սոցիալապես խիստ անապահով աշխատակիցներին, պատերազմի վետերաններին, հաշմանդամներին ֆինանսական օգնություն տալու համար:
4) մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպման համար:

6.2 Արհեստակցական կազմակերպությունը պարտավորվում է՝

1) Աշխատողների սոցիալ կենցաղային խնդիրների լուծման համար հատկացնել արհեստակցական կազմակերպության միջոցների մոտ 50% -ը:
2) Կազմակերպել կոլեկտիվի անդամների և նրանց ընտանիքների հանգիստը և իրականացնել վերահսկողություն:

7. ԳՈՐԾԱՏՈՒԻ և ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Կողմերը իրենց վրա են վերցնում կոլեկտիվ բանակցությունների ընթացքի կանոնների պահպանման, կոլեկտիվ պայմանագրի կնքման և պարտականաթյունների կատարման պատասխանատվությունը:

7.2 Արհեստակցական կազմակերպությունը իրավասու է աշխատանքային և դրա հետ կապված ինստիտուտի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի վերաբերյալ գործատուին ներկայացնել առաջարկություններ:

Գործատուն պարտավոր է մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել առաջարկությունները և գրավոր պատասխանել արհեստակցական կազմակերպությանը:

7.3 Աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերն ու իրավունքները շոշափող որոշումները գործատուն պարտավոր է ընդունել հաշվի առնելով արհեստակցական կազմակերպության կարծիքը, համապատասխան որոշումների (հրամանների) նախագծերը ներկայացնել արհեստակցական կազմակերպությանը, հրամանը հրապարակվելու ժամկետից 5 աշխատանքային օր առաջ:

Արհեստակցական կազմակերպությունը պարտավոր է մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հայտնել իր կարծիքը գործատուին:

7.4 Գործատուն երաշխավորում է՝

1) ՀՖԿՍՊԻ արհկոմիտեի նախագահին ընդգրկել ինստիտուտի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներում՝ ինստիտուտի կանոնադրությամբ սահմանված կարգով,
2) աշխատողների սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել արհեստակցական կազմակերպությանը,
3) արհեստակցական կազմակերպության գործունեության համար անվճար տրամադրել անհրաժեշտ աշխատասենյակներ, հնարավոր կահավորանքով, ինչպես և համապատասխան սրահներ՝ համաժողովներ անցկացնելու համար,
4) արհեստակցական կազմակերպության անդամների դիմումների առկայության հիմքով՝ անդամավճարը գանձել կենտրոնացված կարգով և փոխանցել արհեստակցական կազմակերպության հաշվին տվյալ ամսվա աշխատավարձը վճարելուց հետո, մինչև 10 օրվա ընթացքում,
5) արհեստակցական կազմակերպության պահանջով լուծել աշխատանքային պայմանագիրը՝ սույն պարտավորությունների չկատարման հարցում մեղավոր պաշտոնատար անձի հետ:

8.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն կոլեկտիվ պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից՝ 03.04.2019թվականին, երեք տարի ժամկետով և գործում է մինչև 2022թվականից ապրիլի 03-ը ներառյալ:

8.2 Գործատուն և Արհեստակցական կազմակերպությունը աշխատողներին ծանոթացնում են կոլեկտիվ պայմանագրի բովանդակության հետ այն ստորագրելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Գործատուն պայմանագրի էլեկտրոնային տարբերակը տեղադրում է իր պաշտոնական կայքում՝ այն ստորագրելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

8.3 Կողմերից յուրաքանչյուրը վերահսկողություն է իրականացնում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացման, ինչպես նաև սույն պայմանագրով սահմանված պայմանների պահպանման և կատարման համար:

8.4 Սույն կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ կողմերից մեկի գրավոր ներկայացրած առաջարկությունը մյուս կողմին ներկայացնելու ժամկետից 10 օրվա ընթացքում, համատեղ քննարկման և համապատասխան արձանագրություն կազմելու միջոցով: Կողմերի անհամաձայնության դեպքում՝ այն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

8.5 Կողմերն իրավունք ունեն երկարաձգելու սույն կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երեք տարուց ոչ ավելի ժամանակով:

8.6 Կոլեկտիվ պայմանագրի լուծումը կատարվում է կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին գրավոր նախազգուշացնելով մյուս կողմին ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:

8.7 Կոլեկտիվ պայմանագրի բոլոր դրույթները ենթակա են կատարման Գործատուի, Արհեստակցական կազմակերպության և բոլոր համար:

8.8 Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.9 Կողմերը տարին մեկ անգամ տալիս են հաշվետվություն կոլեկտիվ պայմանագրի կատարման մասին: Հաշվետվությամբ հանդես են գալիս սույն կոլեկտիվ պայմանագիրը ստորագրած անձինք:

8.10 Կոլեկտիվ պայմանագիրը ստորագրվել է երկու հավասարազոր օրինակից 2019թվականի ապրիլի 02-ին:

8.11 Կոլեկտիվ պայմանագրի մի օրինակը գտնվում է Գործատուի մոտ, մյուս օրինակը՝ Արհեստակցական կազմակերպությունում:

Գործատուի կողմից՝	Աշխատողների կողմից՝
,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի ռեկտոր Վ.Բ.Առաքելյան	,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի արհկոմիտեի նախագահ Ա.Անդիկյան
Կ.Տ.	Կ.Տ.